Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յունիսի 6-ին. Թիֆլիս. №23

ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ




Թիֆլիսի Ծննդաբերական-Մանկաբարձական Ինստիտուտում.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄ ՍԱՂԱԹԷԼԵԱՆԸ



— Ինչ յիմարութիւն արի, որ անդամ ընտրուեցի. Ես իսկի շնորհքը չունեմ այս հեռագիրները կարդալու. իսկ ինձ խնդրում են, որ ես օգնութեան հասնեմ հազարաւոր բանտարկեալներին և հայկական գործերին։

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ



Նոր տեսուչ Ս. Կանայեանը

— Դուք գնացէք, իսկ ես կը մնամ, ռոճիկս կը ստանամ, տեսուչ էլ կը դառնամ, առանց ձեզ էլ գործը կը գնայ։



ՍԱՄՍՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՄԵՂԱՆ ՍՈՒՎՈՐԻՆԻ ԱՌԱՋ

Տես Новое Время № 11915

— Իմ մասին ինչ որ ասում են սխալ է. ես ամենակատաղի հակառակորդն եմ Դաշնակցական կուսակցութեան։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.
Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

**Յունիսի 1-ից բաժանորդագրւել ցանկացողները վճարում են 3 ր. 50 կ. իսկ նաղդ 3 ր.**

ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 6-ԻՆ

«ՄՈՒՇՏԱՅԻԴՈՒՄ»

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԵԾ

ՉՔՈՍԱՆՔ

ՅՕԴՈՒՏ

ԱԴՐԱՆԱՑԻՆԵՐԻՆ

Սկիզբը ժամը 4-ին

ՄՈՒՏՔԸ ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ 30 Կ.

## ՀԱՈՒՑ ԱՍԿԻ ՊՈԼԻՏԻԿՈՒԻՐԻ ԳՈՒՐՁԵՐԵՄԷՆ

ՊՐՕՏԷԿՏՈՐԱՏ

Թէ

ԽԻԼՔ

Գաղէթներեմէն իմացած կուլիք, վուր Վենսփաա Կաթխիկուս Մաթէուս Իզմիրլովը, էս՞կվրայ էրկու շափաթն է, միր սիրելի հայրենիք Ռուսէթումն է։

Գաղէթներեմէն շատ բան իմացած կուլիք ու իս կարծում իմ, վուր էն էլ իմացած կուլիք, վուր միր Կաթխիկուսը, Պետերբուրխ վուր գնում է, միր Միջնձ Թագաւուրի հրաւէրքով, միթամ էնդի պիտի խնթրէ, վուր միր անէբութինը պրոտէկտուրատ ըլի Օսմանլի հուղում ապրող հայերուն։

Գիդի՞ք թէ ինչ բան է պրոտէկտուրատը։

Վա՛, կու գիդենաք բռա, թէկի իս գիդիմ, մաշ դուք չիք գիդենա՞յ։

Պրոտէկտուրատի համա, Կաթխիկուսին միթամ խնթրիլ ինՕսմանլուի հայիրը։

Ղուրթ է, օչով ինձմէն էսու համա բան չէ հարցրի, համա իս հիմնեկեէթ ասում իմ, վուր ղարուլ իմ, ու էրկու ձեռով ձիռք իմ քաշում։

Իս գուգիմ, վուր միր Ռուսէթը էնդղամ մինձանայ, վուր Հնդստունեմէն մինչկլի Ամիրիկա, Աֆրիկա ու Ավստրալէն միրը ըլի։

Մա՞շ։

Ու գուգիմ էնդուր, չունքի էսղանց Պարիժ, Լոնդոն գնալու համա, վունց գագրանիցի բաշպուրթ գուգիմ, վունց գագրանիցից յիդ գալիս չուրեթիս համա պօշլէն մօշլէն կուտամ ու վունց էլ շատ փուղ կու խարջիմ մաշինէքի վրէն, չունքի էս սահաթիս միգ մօղ, քանի հեռու գնաս, էնքամ մաշինի փուղ քիչ ին առնում։

Ա՛յ խօսկի գէլիշ, էսղանց Ցխէթա բիլէթը վից շայի աժէ, էսղանց Մօսկով տասնուօխտը մանէթ մէ շայի, մինչկլի Պետրէբուրխ աժէ էրկու թումնի տօլ—Մօսկովեմէն Պէտերէբուրխ կի՝ օխտը, թէ ութ մանէթ։

Պարիժը վուր միրը ըլի, շափթէնը մէ գիդի էրկու ջէր գնամ, չունքի մաշինէն մուքթի տօլ էժան կուլի։

Մէկ էս ու մէկ էլ էն վար, իս անները շատ իմ սիրում։

Դուգիք մէ բան սախմ. ջէհել վուխտը՞ս, մէ գամ գնացի Վարշաւ. խիստ լաւ քաղաք էր, համա օչովի հիգ չէի կանում խօսի, մօղ մէ շափաթ մնացի, վունց մէ օրինաւուր հայ չանհայ, վուր հիգը մէ քիչ խմալիաթ անէի, ինձ ու ինձ փախում էի, վուր սուս կենալով լիզուս փուրիս մէջ ննգնի ու վիրչը անլիզու մնամ, ասէվար էլ չէի գիդի, վուր անները հիդ էլա մէ քիչ «բըշտա-բըշտա» անէի հիգնիրը, չարէս կարած, գարաղուններին եախից էի կպչում, խան ինչ հարցնում խան ինչ. տօ սրանք էլ մէ էն թաւուր ասեվար էին խօսում, վուր վունչինչ չէի հասկանում, դուքանչիքն ու մաղազիաանէրին էլ պօլակուրի էին խօսում, էլ չիմ սասում անդրումն ու գասթինիցեքում. բռա չէ ու ձիր գլխի աբիւր գիդենայ, ձիգ պէս անները, անամութ կուլին, վուր ձիր սաէութար հայեվար լիզուն թողած, ուրիշ լիզուներ իք խօսում ու չիք էլ ամաչում։

Հա, էնէի սասում, վունց էլաւ, վունց չելաւ, մէ սուս գարադօվի սասա էկայ, իմ հաքին գիդենայ, հեսաի ուրախացայ, հեսաի ուրախացայ, կօխս Վարշաւը ինձ բախշեցին։

Վա՛, հայեվար չիմ խօսում, հայերուն չիմ սեհնում, հէր օխնած անները խօ տեհայ, իս նրանց էլ էնենց իմ սիրում, վունց վուր միզ։

Էս ինչի, մէ ուրիշը սախմ։ Մէ լաւ ննգիր ազայ ունէի իմ ջէհելութենի ժուզը, Մօսկովի ունիվէրսատետում խիլք էր սովրում. ինչ էլա՞ւ, ինչ չէլա՞ւ, մէ օր էլ գրան բռնեցին, ունիվէրսատետիցը դուս արին, դա էլ վիկացաւ ու ցօցիալ էլաւ. գագրանիցա գնաց սովրելու. էնդի՛ մէ էրկու իրեք տարի մնաց, իժում վու՛ր խիլք սովրիլը թամամ արից, վիկացաւ ու յիդ էկաւ Ռուսէթ, էնդանց էլ էստի։

Վուր էկաւ հարցրի՝ հ՞ը ասի, վո՞ւնց էր գագրանիցումը. ասմէ՝ լաւ էր, մազրամ հայրենիքի կա՛րուտը քաշում էի կօսէ։—Վա՛ սախ, ղո՛ւրթ իս ասո՞ւմ, սախ. Աստուծ գիդենայ կօսէ. ու պատմից թէ ինչթաւուր, աչքի գամը վուր էկիլ է գրանիցի վրէն, ուրախութենից լաց ըեկլիս է էլի, վիրչն էլ միր ջանգարեքին վուր չէ տեհի, հօրին խի-

թարմիկ է, հայրենիքի փուշը քաղցր է, քանց թէ եադ ափղի վարթը կօսէ։

Ջանդարն ինչ է, ջանդարին էլ պաշպչել էր։

Մա՛շ։

Ա՛յ, ես էլ էտենց եմ. համա դուք կի չգիտենաք, թէ ես էլ ամենքից կու պաշպչեմ, չէ՛, ես ամիրը սիրում եմ, աչկիս լսի հանգը, ու հայերուն էլ սիրում եմ՝ գլխիս պէս ու գուգիմ վուր հայերն էլ էնենց ըլին, լաւ ու ջանսաղութենով, կինքով ու գործով աչողակ, վունց վուր իրենց դէդի ծծիրը գուգին։

Հալբաթաա դրանց դէդի ծծիրը հիմի էլ գուգին, վուր Օսմանլուի հուղումը միր Ռուսէթի պրոտէկտօրատութին ըլի։

Թող ըլի. ես զարուլ եմ, սաղ, խիստ էլ լաւ կուլի, համա էսաի մէ բան էլ գուգիմ ասի։

Բէզգամաղ չլիք գեթադուայ, ես գիգի՞ք եմ խասաթը։

Օսմանլուի հայերուն ինչ է պակաս։

Պրոտէկտօրութին Ռուսէթու...

Չէ, եանդլիշ իք. հայերուն ջէր խիլք է պակաս. խիլք, խիլք, ու էլի խիլք. տօ թէկի խիլք ու բանականութին, փիքր ու փիքր անելու կարողութին չունինք, պրոտէկտօրատութինը ինչ կօակէ։

Ի՞նչի իք ինձ խօսցնում, հա...

Վա՛, խիլք վուր բաժնում էին, մինք վի՞ւրդի էինք. ան թէ վուր խիլք բաժնելու տիղումն էլ էինք, ինչի մէշօկ ու ջուալիրու տիղ՝ քթոց ու կոտրած կարդինկէք էինք տարի։

Լա՛ւ, էտ էլ վուննչինչ, ասինք Օսմանլուումը, էսենց է ու էնենց. էսաի էս ինչի՞ր ինք անում, մինք միգ հասկանում ինք, թէ բանից բէխաբար, խիլքնիրս կորցրիլ ինք։

Էսաի, Ռուսէթումը մինք սասնց պրոտէկտուրատի շկօլէք ունինք, ինչ է միր շկօլէքի հալը, ո՞վքիր ին միր վարժապետնիրի տասից ութը, ինչ խիլքի ու ուսումի մարթիք։

Առանց պրոտէկտուրատի ու ցէնզուրի գազէթնիր ունինք, ինչ է միր գազէթնիրու հալը, վի՞ւրդի ին միր պուբլիցիստնիրը—ինչի՞ Գրիգոր Արծրունովը, Ստէփան Նազարովը, Աբգար Օհանէսովը գերեզմանէրեմէն չին դուս գալի ու Սպանդարն էլ չի մեռնում ջգրուց։

Առանց պրոտէկտուրատի ու Նադիմ փաշից հեռու շատ գրօղնիր ունինք,—համա վի՞ւրդի ին միր Ռափփին, միր Պռօշին, Շահազիզի, Գամառ Քաթիբի, Ծերենցի ու սրանց թաւուրնիրը։

Առանց պրոտէկտուրատի ու սուլթանից էլ հեռու, վարթապետ-էպիսկոպոսնիր ունինք—համա կա՞ն էս սահաթիս Ներսէսնիր, Գէուրքնիր, Արիստակէս, Խորէննիր, Բասաամով ու Բագրատնիր, դուզի՞ք ասիմ Մակարնիր էլ։

Առանց պրոտէկտուրատ էր ու Օսմանլից ադաա, միր վաճառականնիրը, միր Բաքուի հանքիրը, ինչ արինք մինք, վունց միր տունը, միր տիղը քանդեցինք, միր բերնի թիքէն կարեցինք։

Ի՞նչ էինք ու ինչ ունէինք. տօ օղորմելիք, պրոտէկտուրատը ինչ կու օակէ հայերուն, ան սուլթանը վունց միր օխտիցը գուրար, իփ վուր մինք, միր դուշմանն ինք, միր աչք հանուղն ինք։

Ասում ին հայիրս խելունք ազգ ինք։

Սուտ է, բեհէսաբ ին անում ասօղնիրը, էտենցութենով տրնեմիր ին հարցնում։

Խիլք վուր բաժնում էին, մինք իսկի չինք էլ իմացի ու էտու համա էլ, էս թաւուր ինք մնացի։

Պրոտէկտուրատ կօսէ, էսաի պրոտէկտուրատը ինչ կօակէ, իփ ինքնիրս ուփրօ շատ ինք մէկզմէկու կոտորում, քանց թէ ուրիշնիրը, սուֆի ու խօյէրը։

Պրոտէկտուրատ կօսէ. տօ անասունձնիր, ադաք հազարից մէ զամ հայ ակում մարթասպան չէիր գըտնի, հիմի կի բիրթերում հարիրնիրով մարթասպաննիր կան. գող ու աւազակ մասնէրի վրայ չէիր կանայ համբրի, հիմի թուրքերի ու իմերէլներու հիդ բարեբրանում ինք։

Էս սուտլու է, համա վուր ես էլ չասիմ, բաս ո՞վ պիտի ձիգ ասի։

Ես էլ գիդացի, թէ մէ լաւ բան իք ասում ու խնթրում միր Վեհափառ կաթոլիկոսից. միգ հարգաւուր է խիլք, խիլք ու էլի խիլք ու թէ կանայ Հաքեւուր Տէրը, վուր միգ ամա խիլքի դիգ ճարի, միաբանութին գըտնի, լիզուն պահիլ տայ, ասկը ամրոխչացնի, էս անօրէնութիննիրը մուցնիլ տայ, սէր ու միաբանութին հասկացնի, տուտուց-տուտուց բանէրեմէն հեռացնի, էտ միգ համա պրոտէկտուրատ էլ կուլի, պրոտէկտուրատ էլ։

Տօ՛, ուրիշը թէ միգ չի ճանչնում, մինք խօ գիդինք միգ։ Մինք ցցխալ ինք. Աստուծ գիդենայ՝ չէ, մինք ատկամէր ինք, վա՛, գլուխս մեռնի թէ սուտ ասիմ—էլի չէ, մինք կրօնապաշտ ինք, շատիր է, գիփ սուտ է, մինք լաւ բանի չհուք ունինք, համա ուրիշի համար ու էլի ինչ կանանք անի.—ինչ վուր միրն է քանդի. ջիհադն քանդի ավերակ շինի։

Ա՛յ Անին վիկայէք միգ օրինակ, թէ ինչ ինք արի տաաչ, իժում թափաւութ անինք, հիմի էլ էտենց չինք, ու վունց քանդում ինք միր ժամիրը, միր էջմիածինը, միր ճեմարանը, միր սեմենարիէքը, միր շկօլէքը. միր մամուլը, միր գիրն ու գրականութինը, (մէ մէ ջէր գրաբար խօսին էլ լաւ բան է, կու գիդենան թէ, ես էլ մինձ խիլքի տէր եմ), միր վաճառականութինը, միր տուտուրը ու արդունաբերութինը, միր օջախը, միր նամուսն ու աբուրը։

Զօրն ասիմ և կամ զօրն խոստովանիմ։

Գասպար Կալպաուզեանց

---

## ԹԱԶԱ ԱՇՈՒՂԻ ԲԱՆԱ-ԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

«Հայոց աղջիկներ» երգի եղանակով

Հայոց աղջիկներ, ինձ դուրքան ընէք,
Թէ միւս անգամ էլ միտս ընկնէք.
Երբ տեսնում եմ ձեզ էդպէս սրթղած,
Սիրտս խառնւում է, ասում եմ ես եմիկ։

Երբ որ տեսնում եմ ձեզ այլակերպած.
Փուդրի, պոմադով, ներկերով քսւած,
Կուրծքըներդ բաց, քուչէքը ընկած,
Ասում եմ, սրանք հայից չեն ծնւած։

Հալւում եմ մաշւում, երբ էլ չեմ տեսնում,
Հայ աղջկան միջտ, պարկեշտ, ամօթխած.
Ամենքն էլ, իրանց մամքել են տասում
Ու պատկառանքը ծալած, դէն դրած։

Ուսումնական ենք, ասում են նրանք,
Էլ հէչ մի մարդուց չունեն ամօթանք.
Հօրն ու մօրերը, տապրակը կոխած,
Ջլից զատել են, կապ կտրած տպրանք։

Կաւալէրներին, պապրուշկա արած,
Տրօսան ու լաւնէն ձեռները տւած.
Ոչ խնամախօս, տէրտէր են հարցնում,
Մէկ էլ տեսնում ես՝ քեաբինը կտրած։

Հայոց աղջիկներ, իմ ջանին վա՛յ տաք,
Թէ Փալանդուզը, էլ ձեզ միտ բերի.
Ինչքան էլ էրւէք, քանի էդպէս կաք,
Որ ադաչէք էլ, նշան չեմ դրւի։

Փալանդուզ Մկօ

Նորից որ յանկարծ նա չը մարակեց,
Սէփոն ճչալով տեղից վեր ցատկեց, տեսաւ
երազ էր, կողքին էլ կատուն, նա լեղապատառ
տանից դուրս ճեկնեց... գժւածի նրման ընկած փողոցներ, վազում ասում էր, այ գիւղացինէր։
«Տօ սուտ են ասում, մեզ չեն տալ դըրախտ,
«Մէկ մէկ առնում են մեր չորցած հոգին.
«Թէ էապէս գնայ, մինչ ուտենք մենք լախտ՝
«Մենք սաղ չենք հասնի, մինչ «հիշու գաւէկին»։

Շատէլ Արար

---

ՆԻԿԻ ՍԱԹԹԱՐԻՆ (Սարգարից)

Aj, Sattar xanь Sattar xanь
Vaj, Sattar xanь, Sattar xanь
Azgiь irkəz xuxsatar,
Xanь anınьn usatar.

Ləƣ daxmadaƣ aarfəgir,
Azgi kaƣiь fərbəgir.
Osarьnərin kaьnəjgir,
Borƣ nıstı amfərəgir.

Azganər daьaь orig,
Ləƣ ƣapazorb iьə sigir.
Soььu fanegir, aırəgir
Ləƣ anıьan kosrəgir.

Լ. Մ.



ԳԼԽԻՑ-ԳԼՈՒԽ

—Գ. Սարգիս, ինչու կիւրակի ժողովրդական տուն չէիք եկել, հայերէն ներկայացում կար...

—Մի՞թէ, ինչ էին խաղում։

—«Քանդած Օջախ» կոմէդիան։

—Է՛հ, մինոյն է, ես բան չէի հասկանայ։

—Ի՞նչ էք ասում, մի՞թէ դուք հայերէն չգիտէք։

—Ախ, դուք ինձ չհասկացաք. պարզ բան է, հայկական ներկայացման յաճախորդների կողմից ծխածից, բարձր ձայնով խօսելուց, կարելի է լսել, թէ ինչ են ասում բեմի վերայ։

—Դուք ճիշտ էք ասում պ. Սարգիս, մերոնք շատ անկարգ են պահում իրենց։

—Իսկ ներկայացումը յաջող անցաւ։

—Շատ լաւ էին իրենց դերերում պ. Տէր Գրիգորեան և պ. Փիրումեան, միւսներն էլ եօլա տարան։ Իսկ պ. Սարգիս, նախանցեալ ներկայացման կայի՞ք։

—Ոչ, նոյնպէս չէի եկել։

—Օ՛, խղուր, շատ խղուր, շատ հետաքրքիր էր։

—Ի՞նչպէս։

—Շա՜տ հետաքրքիր էր, պ. Արտաքեանը օդապարիկով վեր բարձրացաւ։

—Ի՞նչ էք ասում, իսկ ինչու աֆիշայում այդ մասին չէր յայտարարւած։

—Նա կարծեմ փորձ արեց, միւս անգամ գուցէ Մուշտայիդից բարձրանայ։

—Իսկ օդապարիկը մե՞ծ էր։

—Ոչ, նա առայժմ փորձ արեց վարագոյրի վրայ։

—Ափսոս, երանի եկած լինէի, դա շատ հետաքրքիր բան կը լինէր։

---

ՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ

—Կարպետ. դուրս գնանք ի սէր Աստուծոյ, զահլէս գնաց։

—Ինչու եղբայր, նոր չեկա՞նք, քիչ սպասիր կերթանք։

—Ոչ, ես չեմ կարող սպասել, դու կուզես մնայ, իսկ ես կերթամ։

—Ինչու, ի՞նչ է պատահել։

—Ինչպէս թէ ինչու. մտնում ես եկեղեցի՝ աղօթողների անլսպաթ երգելուցն է զահլադ գնում, բակն ես դուրս գալիս իրիգ ու սեմիչկա ծախողների գոռոցից ականջներ են խլանում, Ներսիսեան դպրոցի աշակերտներն ու ճխլտած շլեապաւորները խօթամամ զահլա են տանում. դէ տես ինչպէս են խումբ խումբ հաւաքւել ու աղտոտ տարատ խօսքերով վիճաբանում. երանի մի կարգին բան խօսեն, ջահանամը, մարդ ականջ դնի. «գոյութեան կռիւ», «ապրելու միջոց», «չակերտաւոր դադափար», «պարտականութիւն», «բժշկի խորհուրդ», մի տես ինչպէս են մէկմէկու բերնից խօսքեր խլում, ինչպէս են գոռում ու վրայ տալի, կարծես բերաններում տաք կարտօֆիլ ունեն. չէ ախպէր, ես գնում եմ, դու ինչ կուզես արա։

Օօխար



---

ՖԵԼԻԵՏՕՆ

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Չգիտեմ ինչ է պատճառը, բայց իրականութիւն է, որ մեզանում թիւրիմացութիւնները աւելի տեղ, գին ու արժէք ունին, քան թէ այդ կարելի է ենթադրել, ոչ միայն մեզանից մեծ ազգերի մէջ, այլ նոյն իսկ մեզանից փոքրերի, փոքրիկների։

Մեզանում եթէ մինը յառաջադէմ գաղափարների և արմատական ուղղութեան տէր է—դա անկասկած թիւրիմացութիւն է։

Մինը կղերական է, թունդ կրօնամոլ—դա նոյնպէս թիւրիմացութիւն է։

Սօցիալիզմը մեր մէջ, ոչ պակաս թիւրիմացութիւն է, եթէ չասենք ուղղակի ապուշութիւն։

Բուրժուան՝ տեղով, գիրքով, հասկացողութեամբ և ձգտումներով հայ բուրժուան, նոյնպէս մի թիւրիմացութիւն է։

Հոգևորականը, եթէ անգամ նա սինօդական և բարձրաստիճան է, նոյնպէս թիւրիմացութիւն է։

Եւ այդպէս, հաւատացէք, որ մեզանում, թիւրիմացութիւնները աւելի շատ են, քան թէ մենք ինքներս, որ հաշւում ենք քանի մի միլիոն։

Թիւրիմացութիւն չեն արդեօք, Սամ. Յարութիւնեանը, Կոստ. Խատիսեանը, Բագրատ Նաւասարդեանը և այլն և այլն։

Սամ. Յարութիւնեանը իրեն հաստատում է խօսքերիս ճշմարտութիւնը Новое Время-ի մէջ, № 11,915-րդում հերքում է, որ ինքը ձերբակալւած է եղել եւ բացի սրանից թունդ էլ հակառակորդ է Դաշնակցութեան։

Որ ինքը ձերբակալւած չէ եղել, դա իրականութիւն է, որ և դաշնակցական էլ չէ եղել, նոյնպէս ճշմարտութիւն է, բայց որ թունդ հակառակորդ չէ եղել և չէր էլ կարող լինել, Թիֆլիզի թեմի կաթողիկոսական պատգամաւոր Սամսոն Յարութիւնեանը, դա էլ ճշմարիտ է և թունդ ճշմարիտ—ուրեմն իր ասելը թէ հակառակորդ է եղել—դա՛ թիւրիմացութիւն է։

—

Կոստանդին Խատիսեանը արդէն ծնւել է թիւրիմացաբար Թիֆլիզում, եթէ նա ծնւէր Պօլիս և մեծանար սուլթանների մայրաքաղաքում, այդ դէպքում կարելի էր հաշւել, որ Կոստանդին Խատիսեանը իսկական Խատիսեան է, այսինքն այնպիսին, ինչպէս նա կայ իսկութեամբ—հօս-հօս—այլկերպ ինչպէս մենք բացատրենք այն թիւրիմացութիւնը, որ նրա կեանքում լինում են ամեն օր, ամեն րոպէ և ամեն վայրկեան, լինեն այդ րոպէները նւիրւած հայերի կուլտուրականութեան, թէ «Զանգ» թերթի վաղահաս մահւան և Կովկասի ամպրոպային, անզատ կատաղի տաւչնորդողներին—որոնք նոյնպէս թիւրիմացութիւններ էին գրողի հետ միասին։

—

Եթէ հետու չգնանք և մի անգամ էլ եկեղեցական գործիչների հախիցը բռնենք, պակաս թիւրիմացութիւն չէ ներկայացնում իրենից և պ. Խաչ. Տէր-Մարգարեանը, Թիֆլիզի Թանդոյեան եկեղեցու զօռով երեցփոխը։

Ինչ է իրենից ներկայացնում պ. Տէր-Մարգարեանը։

Մի անհատ, որ կապիկից կուրացած, տգեղ անձնապաստան թիւրիմացութեամբ, ցաւ ու պատիժ է դառել, թէ եկեղեցուն, թէ ծխական դպրոցին, թէ միաբանութեան և թէ իրեն «ուզող» ու «չուզող» ծխականներին։

Ասում են, քամբասում են, անգամ անարգում, ծեծում ու քոթկում են մեր պա-

## ԹԻՖԼԻԶԸ ԳՆԱՀԱՏԻԱԾ

—Այ կնիկ, զահլաս տարել էիր Թիֆլիս տեսլով. սա էլ քո Թիֆլիսը. հաւանում ես։

—Այ մարդ, Թիֆլիս կասէին արքայութիւն է, ես չէի հաւատում։ Արքայութիւնից էլ մի բան աւել է. համա էս լպստած աղջիկները և մէկ էլ արտաքնի չըխկչըխկոցը որ չլինի, Թիֆլիս մի խօսքով հարիւր մանէթ արժէ։

*Լեւոն Մակ.*

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԵՔԵԱԹ

*Լեգենդա մարդու ծագման մասին*

(Ամենահնագոյն)

Ալլահը, օրհնեալ եղիցի անուն Նրա, ստեղծելով երկինքն ու երկիրը, ծովերն ու լեռները, թռչուններին ու կենդանիներին, հանգստանում էր…

Նա ընկողմանած նստել էր գահոյքի վերայ։ Առջեւում դրուած էր արմաւի հրաշալի փայտից շինուած սեղան։

Եւ աշխարհի ստեղծագործութեան աւարտման առթիւ, Ալլահը կամեցաւ մի շիշ պատուական գինի խմել։

Ալլահը գլխաւորապէս գոհ էր. որ կարողացաւ, առանց ճարտարապետների և կապալառուների, գործը գլուխ հանել։

—Է՜յ, առիւծ, մի շիշ գինի տուր, հրամայեց Ալլահը։

Բայց առիւծը տեղից չշարժւեց։

—Ես սպասաւոր չեմ, ասաց հպարտ առիւծը։

Ալլահը հրամայեց վագրին, յովազին, ընձառիւծին, եզին, ձիուն, կովին և մինչև անգամ խոզին։

Բայց ոչոք նրան չհրամցուց։

Եւ Ալլահն յիշեց, որ օդանոներում, պանդոկներում հարբած չարչիները սովորաբար կանչում են,

—Է՜յ, մարդուկ!

Այսպէս էլ Ալլահը կանչեց!

յայտնւեց մի թզուկ, երկոտանի արարած։ Նա դէմքի շողոմ նայւածքով և ստրկական ժպտով, Ալլահին գինի հրամցուց։

—Բարի է, ասաց Ալլահն այս արարածին։ Ապրիր երկրի վերայ, անուանիր մարդուկ և ծառայական հոգին, միշտ քեզ հետ լինի։

II

*Ինչու է կինարմատը դժւարութեամբ դրախտին արժանանում, քան տղամարդը։*

Հասան-Հուսէյնը երազ տեսաւ։

Նա դրախտումն էր։

Դրախտը բաժանուած է երկու բաժանմունքի,–տղամարդկանց և կանանց։

Եւ զարմանալի էր, դրախտի տղամարդկանց բաժանմունքում բազմաթիւ էին լուսաւոր ուրւականները, որոնք դրախտի ծառերի շւաքների տակ գրօսնում էին։

Իսկ կանանց բաժանմունքում, մէկ երկու տիկիններ միայն։

Անզօրութիւնից Հասան-Հուսէյնը գնաց դռնապանի մօտ ու հարցրեց։

—Ինչու դրախտում կանայք քիչ են։

—Որովհետև հիմայ դրախտի դռներից նրանք դժւարութեամբ են ներս հասնում

—Հասկանալի է, անառակութեան, ամուսիններին դաւաճանելու և ուրիշ մեղքերի համար—ասաց Հասանը.

—Ոչ, մեծ շլեապաների պատճառով, պատասխանեց դռնապանը։

*«Բուղ-իկ»*

***

Տղէրք, գոռաց Մուրադ—Ամին,
Արևն ատել է մեր շեմին,
Արևմուտքը բուք է կապել,
Շրնգ-շրնգ կը գայ սարի քամին։

Դէհ շուտ ելէք կալը երթանք,
Ինչ որ հանենք՝ ազին պիտ տանք…
Եարսք, կրլնէր անկուշտ աղէն
Մեզ պէս ժեռնէր մի անպատանք։

Գեղը քամել լցրել մառան,
Գողերն արել ծառայ դասն,
Թէ որ մէկը ծպտուն հանէ,
Վայ է եկել տարել նրան…

Ջուխտ կալ ունինք մէկէլ էրան,
Ինչ որ ունինք՝ աղէք կերան.
Էսօր կը գայ պարտք ուզելու՝
Գիլի նման բացած բերան…

Գող-անիծած մկան նման
Հարամել է գեղի աման,
Ջուլում տար ուր դնում է,
Այրում է սաղ չայիր-չիման…

Մէկ աչքից քօռ քեալլագեօզ է
Աւել անուն «Ղարագեօզ է»,
Ձեզ մէկ աչքով պիտի նայեմ,
«Բէֆա», կասէ, այսպէս կուզէ…

Տուն մանելիս չատկ է ուզում,
Շանը շանի վերայ դիզում,
Թէ բարաթից մի օր անցաւ,
Գարտականի բուրդն է գզում։

Հէյ, բախտ. նամարդ, դու սևերես,
Մուրադ—Ամուն թէ կը սիրես,
Մէկ քաղցր օր պինդ շալակած.
Թէլիկ-մէլիկ մեզ կը բերես…

Վերև յանկարծ գերան ճաքեց,
Կարծես երկինք ամպ որոտաց.
Մուրադ—Ամին սարսափ կարած,
Քնած տեղից խելօքն ցատկեց։

Խեղճ աղքատը գիշերով ուշ,
Հին մարագում քնած անուշ,
Գարկ ու փայտը գլխատակին,
Երազում էր դարդեր պուպուշ։

Խարխուլ կտուր փլեց ընկաւ,
Գոռաց Ամին ու դուրս ծլկաւ,
«Մի գիտէ ում հարամ փողն էր,
«Տեսնր գլխից ինչ սև եկաւ»։

*Շատէլ-Արաք*

---

բան Թաչատուր Տէր—Մարգարեանին, գող աւազակ են անւանում, խնդրում են հեռանալ պաշտօնից, իսկ նա պատասխանում է,

—Ոչ գող եմ, ոչ աւազակ և եկեղեցուց էլ չեմ հեռանայ։

Հաւատում եմ, որ պ. Թաչ. Տէր—Մարգարեանը անպարտ է դէպ եկեղեցական դրամական շահերը, բայց չէ որ եկեղեցին ունի և բարոյական շահ—դա ծխականների անզորրութիւնն է և ցաւալի է, որ յարգելի երեցփոխը բարոյականը նիւթականից վեր է դասում։

Ասում են հետացիք, քաղաքացին պէտք է հեռանայ, հակառակ դէպքում այստեղ կարող են և անկապակած, թիւրիմացութիւններ ծագել ծխականների, երեցփոխի և միաբանութեան վերաբերեալ

Եկեղեցին կապալով կարծեմ չէ վերցրել ոչ նա, ոչ միւսը և երբ խօսում են ժողովրդի կողմից՝ ուրեմն լսեցէք նրան, թէև այդ ձայնը թոյլ, անզօր և միակը լինի հազարաւորների մէջ։

—

Յարգելի բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանը, նա որ մօտ երեսուն տարի առաջ միտք յղացաւ հիմնել Կովկասեան Բարեգործ. ընկ. իւր բազմաթիւ ճիւղերով, իր արդիւնաւէտ գործերով՝ հաւանական է, ինչ եմ տեսում, իսկապէս մի թիւրիմացութիւն է նոյն Բարեգործական ընկ. համար. և դա զարմանալի չէ։ Տարերային էին վերջին յեղաշրջումները, տարերային էր, թէ պետական, թէ մեր ազգային կեանքը և գուցէ դա է պատճառ, որ անցեալի հմայքից այլեւս նա հասարակութեան, այսինքն Բարեգործական ընկերութեան անդամներին չէ ճանաչում և թիւրիմացաբար կարծում է, թէ նրանք իրա տեսած ութսունական թւականների գլուխներն են ու ուղեղները—և անդամներն էլ, թիւրիմացաբար կարծում են, որ յարգելի Բագրատ Նաւասարդեանն էլ, նորագոյն ժամանակի քամու հետ տարուբերւող գլուխն ու ուղեղն է

Այլապէս ինչպէս բացատրել Բարեգործական Ընկերութեան ընդհանուր լուրջ ժողովներում տեղի ունեցած քրքիջն ու ծիծաղը և եթէ կուզէք աւել, հարկաւոր արցունքի տեղ, աւելորդ ծամածռութիւններ, կոպիտ դարձւածքներ, վիրաւոր ակնարկներ և համարեա թէ տուր ու դմփոցի հասցնող ածականներ։

Թիւրիմացութիւննե՜ր, թիւրիմացութիւններ։

*Նս-Նմ*

## ՄԵՇՉԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Քաղաքացիները մեշչանների վարչութեան մէջ մայիսի 27-ին, ժողով էին նշանակել մի քանի կարեւոր խնդիրների համար։

Նախ քան նրանց հաւաքուելը, մենք ծանօթանանք այդ պատուաւոր քաղաքացիների և ժողովի տեղի հետ։

Մի փոքր սենեակ, որտեղ դասաւորուած են ձեւաձև 4 կարգ աթոռներ, մի սեղան, պատին կախ ընկած մի ժամացոյց, որ առաւօտից մինչև միւս առաւօտ, միշտ ժամը 5-ն է ցոյց տալիս և մի օրացոյց, որ ժամացոյցի ջղբու, միշտ մի օր առաջ է վազում։

Քաղաքացիները կամաց կամաց հաւաքուեցին։

Առաջին կարգի աթոռների վրայ բազմեցին մի քանի Գուբեռնսկոյ սովետ. ծառայողներ և հին ռէժիմի վաճառականները։

Երկրորդ կարգի աթոռների վրայ՝ երկաթավաճառի ու ամանավաճառի բուղալտերներ և ցոցիալ ուսելու համար Նուեթլուխ վազող պրիկաշչիկներ։

Երրորդ կարգի աթոռների վրայ՝ փայտօնչիներ ու մի քանի հանաքչի մարդիկ։

Իսկ չորրորդ կարգի աթոռների վրայ բազմեցին իսկական քաղաքացիներ, խարազ, դալաք, դարբաղ, չիբուխի կոթեր ծակող, թոքմաչի, խողից ընկած գուռնաչի և մի ջուխտ էլ նալբանդ։

Նիստը բացւեց։

Լուծեցին զանազան խնդիրներ առանց վիճաբանութեան։ Նախագահը կարդում է՝

—Դաղալը խնդիր է ներկայացրել, որով խնդրում է իր պարտքը կիսել, քաղաքացիներ, ով որ յարգում է նրա խնդիրը, թող ոտքի կանգնի։

Բոլորը կանգնում են։ Նախագահը շարունակում է.—Իսկ ով չէ յարգում նրա խընդիրը, հիմա նա ոտքի կանգնէ, դարձեալ բոլորը ոտքի են կանգնում, բացի յետին կարգից, որոնք անուշ քնի մէջ են։

Մի քանի խնդիրներ այդ ձեւով լուծելով ու մի քանիսն էլ յետաձգելով, կանգ առան մի խնդրի վրայ, որ և երկար վիճաբանեցին և մի քանիսն էլ խռովեցին ու փախան։

—Քաղաքացիներ, սկսեց Նախագահը, յայտնի է որ մեր ուպրաւան ամեն մի վըկայական պահանջից վերցնում է 20 ական կոպէկ, որից մինչև տարուայ վերջը գումարւում է մօտ 200 րուբլի, աւելի լաւ չէ՞ր լինի, փոխանակ 20 կոպէկի, 40 վերցնէինք և հաւաքուած գումարով քաղաքացիներին օգնէինք։

Մէկն ասաց, որ դա լաւ կը լինի, այդ գումարով կարող են մի քանի աշակերտի կեանք ազատել, որոնք ուսման փող չունենալու պատճառով ինքնասպանութիւն են գործում։ Մի ուրիշը թէ, ոչ, չի կարելի աւելացնել, քանի որ մեր ուպրաւայի դիմողը նոյնպէս քաղաքացի է և ոչ ազնուական։ Մէկն էլ վեր կացաւ ու գոռաց.

—Ամխանակեբօ, սուլորիթ մախողօս, (ընկերներ, թող բոլորովին վերջանայ)։

Իսկ Զմշկեանը երկար մտածելուց յետոյ, վեր թռաւ ու ցուցամատը ճակատին դնելով, վրայ աւեց.

—Աւելի լաւ կը լինի այդ գումարով մի մարդ նստեցնել կօնախտորում. որպէսզի նա մեզ ամեն օր տեղեկութիւն տայ, թէ այսօր ով մեռաւ, կամ վաղն ով կը ծնուի։

Քաղաքացիները բարձրաձայն սկսեցին ծիծաղել, իսկ ինքը ինքնաբաւական իր արտասանած խելօք ճառից, տեղը նստեց։

Յետին կարգը, որ Զմշկեանի բարձր խօսելուց ու քաղաքացիների ծիծաղից արթնացել էր, Զմշկեանի ճառը շատ հաւանեց. որովհետև իրենց միշտ յայտնի կը լինի, թէ որտեղ քէլեխ կայ ուտելու։

Այդ հարցը չվերջացրած քաղաքացիները կամաց կամաց հեռացան, Մնաց միմիայն Նախագահը, որը ինքն իրեն «ժողովը փակուած եմ համարում» ասելով դուրս եկաւ։

Օռխար

---

## ՆԱՄԱԿ ԳԱՆՋԱԿԻՑ

*Գեանջի Բաղատէրների Գինի ընկերութեան «բամետէրների արզա՝» առ Կալստուզով։*

Ազա, 3 տարի առաջ սկսած մեր ընկերութիւնն այսօր փառաւորապէս հօգին յանձնեցինք բոլորիս ներկայութեամբ և 40 լոլկանների ողբասացութեամբ։

Հոգին տալիս՝ նրա ունեցածներից մեզ բաժին թողած՝ նախագահ Մեծի-Կիրակոսին, անդամներ Վաղօ-Մարտոսին, և Համօ-Համօսին, չաշկը բցող Գարօ-Յակոսին մեր մէջ հալալ բաժանելու համար, 73 կտոր արինք։

Ամեն մէկս ուզում էր, նախագահի գլուխըն իրա ձեռքը գցել, և դրա համար այնպիսի կռիւ դալմաղալ բարձրացաւ, որ քիչ մնաց գլուխը նորից իր տեղը դնէինք։

Հոգի ունենք տալու, նրանք ընկեր. օգտի համար երեք տարի բացի նրա կայրերից… նոյն իսկ իրենց ռոճիկների 1/100 մասը չեն ստացել, և այդ պատճառով այնքան լղարել ու ջանից ընկել էին, որ կրտասելիս բոլորից 1/4 ֆ. արիւն դուրս չեկաւ։

Կարաստելուց միայն ազատել է ընկ. անդամ, „Коммивояжеръ" յայտնի զօրքս Պաւէլ Սարուտովը, որն ընկ. 3000 վեդրօ գինին վերցրած, իր կնոջ հետ արտասահման է գնացած եղել։

Նրա գրած գրարար նամակից իմանում ենք, որ նա, նաւով Իտալիայի ափերից անցնելիս, «Մեսինա և Ռէջիօ» քաղաքների կործանման ժամանակ «բարերախտաբար» նաւը խրտնում է ու Պաւլին, գինու տակառների հետ, կուլէ գնում ծովի ալիքներին։ Տարաբախտաբար նա լիտարգիական քնով քնած լինելով, ոչինչ չի զգացել ու «թալ-թալ» ըլելով ծովի ալիքների առաջ, ընկել է Կասպից ծովը։ Քնից արթնանալով ու իրեն տեսնելով Բաքւի մօտ, մի կերպ ցատկում է ու ափը դուրս գալիս, ու ոչ մի կոպ. չունենալով գրպանում, Գեանջա հասնելու համար՝ մտնում է աշխիկի մէջ, ու իրեն բարաթ անում մեր ադրեսով։

Անցեալ օրը գնացել էինք «Надежда» ընկերութեան գրասենեակը աշչիկն ստանալու., մեծ եղաւ մեր զարմանքը, երբ տեսանք աշխիկի գլխից կպցրած մի հաշիւ, գրուած Պաւէլի ձեռքով, որով պահանջում է ընկեր. բացի 3000 վեդ. գինին՝ էլի, ամեն մի վեդ. 21 1/2 կոպ. իբրև իրան՝ խեղդուելուց ազատելուն մադարիչ, և 339 ր. նաղդ փող՝ որի մի մասը իբր նրպատ է աւել Աղանայի ադէտից ազատուածներին, իսկ միւսով ժամ ու պատարագ արել մեռածների հոգու փրկութեան։

Մենք էլ իրա հոգու համար արինք։

Հիմայ հարցնում ենք, ազա. փողը տանք Պաւէլին աշխիկիցը հանենք, թէ թողնենք ընդեղ մնայ։

«Փայ»-ին նայողը ասեց, որ. հայերիս մէջ ընկերութիւնների օր առաջ «Բէյ-Մուրադ» ըլելու գլխաւոր պատճառը, մեր օդում ու ջրում եղած երկու տեսակ միկրոբներն են, որոնցից շատ է գտնւում Գեանջում, և որոնց հախից, միայն և միայն կարող է գալ, «Խաթաբալան» և իր շէֆ Կալստուզը։

Այս ամենը յայտնելով Ազայութեանդ՝ այժմ մենք՝ մեր գինիներից, փողերից, և կայքերից դատարկ նստած ենք, դու էլ դատարկ նստես մեզ էս օրը գցողներից, 1 եթէ չը տալս մեր արզան, 2, Պաւէլի դիւանը շուտ չանես 3, մեր միկրոբների չքիները չը քաշէս «Խաթաբալումը», ու, մի մի օրինակ բարաթով ուղարկես մեզ, որի փողը այստեղ կը տանք ձեր գործակալին։ Մարկի փողը ուած է։

Վասն անգրագիտութեան բաղատէրների և ազաչանօք նոցա՝ ձեռք դրի՝

*Ընկեր Սաշա*

---

## ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

*Քաւոր Գասպար*

Ես յամէն բանն էլ քրեհով տալը տեհելի, համա մեռնեմ յիրա սուրբ զօրութենին, խաչն ու աւետարան, մասունքները տեհիլ չի, որ տան քրեհով։

Մեր գեղցիք տեհան անձրև չի գալի, մի քանի ֆոքի տէրտէրների հետ գնացին Մուղնի, որ մասունքները բերեն, բալքի անձրև գայ. գնացել ին վանահօրը ասել, թէ մասունքները տուր, տանենք Աշտարակ, մի էրկօրից յետով ըլյետ կը բերենք։ Վանահայրը աւել չէր, թէ քանըհինգ մանէթ ա, կտաք կը տամ, տալ չէք, բարի ճամբայ։

Մերոնք մտածել են, թէ տխուր 25 մանէթ խէչամբուր չի գալ, հօ պակասը մեր ջիբիցը չի պտի տանք։ Տասնըհինգ մանէթ ին տեսել՝ տեսել չէր. դարդակ էկել ին, մի մարդ էլ չէր պատահել, որ աստուտուբը գլուխ բերէր։ Էկան մեր Շուխոնց ռեստորանը գեղի չորս գնով ման ածեցին, թափոր արին, հըս մատաղ էլ արին։ Մի չարթից յետով, էրկոր յիրար վրի անձրև էկաւ. վարդապատի ինադու։ Մարդ յիմանայ, հմի վարդապետը ինդարա փոշմանել։ Ցորնների յուշնեքը մի պուճուր գլխներն էկաւ։

Քո սանահէր Ցարուխ

---

## Ը Ն Դ Ո Ւ Ն Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—Դէհ, ասացէք տեսնեմ, ինչպէս ընդունեց ձեզ պ. մինիստրը,—հարցրին Դումայի մեծամասնութեան ներկայացուցչին։

—Շատ սիրալիր, թէև ձեզ չասաւ,—պատասխանեց ներկայացուցիչը։

—Միթէ. ինչու։

—Ախր, նա երկու ձեռքով էլ աշխատում է՝ ձախով օրէնքներ է գրում, իսկ աջով նրանց միտքը բացատրում։

«Բուդ-իկ»

---

## Զ Ա Ր Ա Գ Ո Ր Ծ

(Թուրքերէնից)

Տանտիրուհին այլայլած դէմքով, ձեռքին մի թղթի կտոր բռնած՝ սանդուխները ջարդելով վայր իջաւ շտապ։

Հասնելով դռնապանին, ասաց։

—Նայիր, Իւան, թէ ես մեր տներում ապրող պ. X սենեակում ինչ եմ գտել։ Նա անզգուշութեամբ վայր ձգեց, իսկ ես վերցրի ու կարդացի։

Եւ ինչ, չարագործ ապագակի մէկնէ դուրս եկել դա! Ույ! Անպատճառ կամ գրամաշորթ կը լինի, կամ սոցիալիստ... կամ ուրիշ վատերից...

Դռնապանը վերցնելով պառաւից թղթի կտորը, կարդաց։

«Զինուած կողոպուտ—7 րուբ.»

«Ոստիկանի վերայ յարձակում—2 ր.»

«Թափօրներ—1 րուբլի, 75 կոպ.»

—Պէտք է անպատճառ վազել և ոստիկանութեանն յայտնել! փախաց տանտիրուհին։

—Անպատճառ!—համաձայնեց դռնապանը,—երևի նոէր էլ կը ստանանք...

Փորձն ընկաւ ոստիկանատուն։

—Ասացէք, այս դուք էք գրել?—

—Այո, ես.

—Ուրեմն դուք յանձն էք առնում, որ պատկանում էք սոցիալիստ—յեղափոխականների կուսակցութեան, և այն գրած ոճրագործութիւնները դուք կատարել էք։

—Ոճրագործութիւննե՞ր? նրանք այո, կատարած են, բայց ես այստեղ ինչպէս եմ? Ես լրագրի բէպօրտեօր եմ, ես տալիս եմ միայն տեղեկութիւններ.—Իսկ այն, ինչ գտել են իմ սենեակում, դա ինձ հասանելիք հօնօրարի հաշիւն է...

Պըլլան Ցախումբ.

---

## ԿԻԼԻԿԻԱՑԻՆԵՐԻ ՕԳՏԻ՛Ն

Վերջին ատաճանի, մեծ, աննկարագրելի փորձանք հասաւ Թիւրքիայում Ադանայի վիճակի հայ ազգաբնակութեան։

Հազարաւոր որբեր, այրիներ և ծերունիներ—ջարդից մի կերպ ազատուած—օգնութեան կոչ են ադաղակում։

Սովը, հիւանդութիւնները, միացած վերջին ծայր աղքատութեան և գրկանքի հետ, ազատուածների գլուխին դարձնում են անհասատալի թշուառ և ողբերգական։

Մենք չենք կարող՝ և չը պէտք է խուլ մնանք այսպիսի մի հանրային թշուառութեան դէպքի առաջ։ Օգնութիւն է պահանջւում և շուտ, առատաձեռն։

Եւրոպան և Ամերիկան արդէն ձայն բարձրացրին այս ժողովրդային աղէտի համար և ամեն տեղից նուիրաբերութիւններ տեղացին,

Ժամանակ է, որ մենք էլ մտածենք օգնութեան մասին և տանք մեր լուման մեր թշուառ հայրենակիցներին—օգնութեան ձայն արձակող ազատուածներին։

Իշխանութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի բոլոր հայ ընկերութիւնների ներկայացուցիչներից կազմւած Յանձնաժողովը յանձն է առել, առաջիկայ յունիսի 6-ին Մուշտայիդ այգում տալ մի մեծ ժողովրդական զբօսանք։

Թող առատ լինի նուիրատուի ձեռքն այս բարձր նպատակի համար։ Յանձնաժողովը յիայոյս է զրուելու ձեր առանձին ուշադրութիւնը դէպի կազմակերպելիք զբօսանքի նպատակը և վստահ է, որ Դուք չէք մերժիլ Ձեր օգնութիւնը՝ այցելելով այդ զբօսանքը։

Նախագահ Վարչ. Հայուհեաց Բարեգ. Ընկերութեան Մարիամ Թումանեան, փոխնախագահ Թորհրդի Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. Յովհաննէս Սպենդիարեան, նախագահ Վարչ. Թիֆլիսի Չքի ճաշարաններն Ընկ. Հեղինէ Աֆթանդիլեան, նախագահ Վարչ. Հայոց Տնայնագործական Ընկերութ. Ալէքսանդր Քալանթար, փոխնախագահ Թորհրդի Հայոց Ազգագրական Ընկ. Հայկանուշ Մարտիրոսեան, նախագահ. Վարչ. Հայուհեաց Որբախնամ Ընկ. Շուշ. Բայսողօլեան, նախագահ Վարչ. Հայոց Դրամատ. Ընկ Գաբրիէլ Ծուրինեան, նախագահ Վարչ. «Լոյս» Ընկ. Գաբրիէլ Լեւոնեան. նախ. Հայ Ուսուցիչների և Վարժուհիների Միութեան Գրիգոր Վարդանեան։






---

## ՓՈՍՏԱՐԿՂ

Թիֆլիզ. Ս. Նազարեանին.—Բանաստեղծական տաղանդ անպայման ունէք, բաւական է, որ հայ էք, գրեցէք. Բայց մեր տպել. Ձեր միւս յօդուածը պ. Արգիւլ-Համիդի մասին անյարմար է։ Մենք մեր տեսածներն էլ չենք կարողանում տպել, ուր մնաց ձեր երազները տպենք։

Քերթի Գ. Դաւիթովին.—№ 17 ստացուած է։ Ունենք միայն տարեկան բաժանորդների համար. մեծ քանակութեամբ չենք կարող ուղարկել։

Մոսկվա. Զակին.—Լաւ էք անում. ի հարկէ լաւ կլինի։ Նիւթը խօսելը լաւ է, ինչպէս դուք էք անում։

Պօլիս. Նշան Էֆէնդիին.—Զուր կը դժկամակէք, ժամանակը անանց է։ Կուզէք պայթել, ճաքել, յիմարութիւն կանէք. այս բողէքս առանց էն էլ շատ ենք կատարել, որբ ու անտէրներ թողել, դուք էլ եթէ մնանէք, ձեր գաւակները կիման անտէր, իսկ գրանով ոչ ոքի չէք օգնել։

Շուշի. Մուղայիին.—Ձեր գրած բանաստեղծութեան մէջ, միայն ստորագրութեանն հասանեցինք։ Գրեցէք, տպենք։

Ն. Նախիջեւան. Շապօշնիկովին.—Ասում էք թէ Կաթողիկոսին կուզէք գանգատել Ներսէս Եպիսկոպոսից և Բենեկից։ Թորհուրդ էք հարցնում, թէ ինչպէս անէք. երևակայէք, որ նոյն անձինք մեզանից այդ սաթիւ խորհուրդ հարցրել են,

Մենք ինչ պատասխանենք։

---


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Լ ո յ ս տ ե ս ա ւ

Ց. ՍՈԼՕՎԵԱՆԻ

«Ո՛ Վ Է՛ Ն Ա՛»

Պատմուածք

Գինն է 5 կոպ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին։

АФРЕТЪ
МАМЕДЪ-АЛИ
ШАХЪ
Современная Персія
Александрополь тип. Ширакъ 1909

ПРОДАЕТСЯ
Въ Тифлисѣ книжная торговля Гуттенбергъ
Въ Александрополѣ Типографія Ширакъ

Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ
Հանրամատչելի
ԲԱՌԱՐԱՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐ
ԵՒ
Գործածութեան մէջ մտած մեքենաների ու դարձուածների
Անհրաժեշտ ձեռնարկ լրագիրներ և գրքեր կարդալիս
308 երես. հատով գինը 1 ր. ճանապարհածախսով 1 ր. 20 կ., գումարով առևտրականին զեղչ։
Դիմել՝ Тифлисъ; Кавказская Книжная Торговля Захарія Грикурова. Ճանապարհածախսը գնողի վրայ է։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1909 թ. յունիսի 1-ից
„ՈՒՂԻ“
Բժշկական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթի
Բաժանորդագինը. Բաքու՝ մինչև տարվայ վերջը 2 ր., Բաքուից դուրս՝ 2 ր. 50 կ., արտասահման՝ 3 ր., հատը՝ 7կոպ.։
Հասցէն՝ Баку. Типографія Н. А. Эриванцова, Редакція „УГИ“. Դրամ և ապահովագրած նամակներ ուղղել՝ Баку, уголъ Прачешной и Молоканск ул., домъ Кусиса, зубному врачу Мартиросу Каграманянцу.

Լոյս տեսաւ և վաճառւում է
Բ Ա Խ Շ Օ Ի
ՕՐԷ՛Ն ՉԻՐ ԿՈՒԹ՛Ն Է
Գինն է 5 կոպ.





ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԱՐՏՕՆԻԱԾ
Ամենալաւը Աշխարհում

ԱՆԳԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարմարութեան, շքեղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ




1888
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Մ Ի Ւ Ն Խ  Ե Ւ  Վ Է Յ Ս
ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ՝ ՄՇԱԿԻ № 100-ՈՒՄ



[redacted]

—Կաթողիկոսը ծովով կը գայ Օդեսսա. այնտեղից կերթայ Կիևի վրայով Պետերբուրգ. կը վերադառնայ Մոսկուա, Վարոնեժով Ռոստով, Նոր-Նախիջևան. այնտեղից Արմաւիր Դերբենդ, Բալաջարով կը մտնի Բագու, Բագուից Գանձակով Թիֆլիզ. այստեղից Նաւթլուխ. Սանդար-Սադախլոյի վրայով Ալեքսանդրապոլ. այդտեղից Կարբիւնի վրայով Էջմիածին.

Մենք այս հարցին կրկին կը վերադառնանք.





ԴԻՄԶԻՆԱԿԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

...Պէտք է որ բոլորն էլ կեղծ ունենայ.

ԹԻՖԼԻԶԻ ԿԱՆԱՆՑ ԱՊԱԳԱՅ ԿԼՈՒԲԸ



ԱՀԸ ՄԵԾ Է ՔԱՆ ՄԱՀԸ



ԳԱՂԹԱԿՈՒՄ

Խօլերայի վախից քաղաքացիք ամեն ինչ թողած՝ փախչում են դէպի ամառանոցները։ (Լրագիրներից)

Վիմագր. Գ. Դիւստերզիկի